Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ 1

Կազմված է 08 ապրիլի 2025թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի տուրիստական ծառայություններ մատուցողների միություն» հասարակական կազմակերպության 2025 թ. ապրիլի 8-ի արտահերթ Համաժողովի որոշմամբ

Կազմակերպության նախագահ

Բագրատ Մովսեսյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝

05 փետրվարի 2024թ

Գրանցման համար՝ 211.171.1368347

ՀՎՀՀ՝ 02904653

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ 002.1 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Գրանցված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝

«18» 04 2025 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

2025 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Հայաստանի տուրիստական ծառայություններ մատուցողների միություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և իրավաբանական անձանց ՝ իրենց ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու և հանրօգուտ գործունեություն իրականացնելու նպատակներով ստեղծված հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.3. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենսդրության, այլ նորմատիվ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և արտասահմանյան երկրներում՝ այդ երկրների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպության անվանումն է՝

- Հայերեն՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, հապավում՝ «ՏՈՒՐՄԻՈՒԹՅՈՒՆ»
- Ռուսերեն՝ ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ «СОЮЗ ПРОВАЙДЕРОВ ТУРИСТИЧЕСКИХ УСЛУГ АРМЕНИИ», հապավում՝ «ТУРСОЮЗ»,
- Անգլերեն՝ “UNION OF TOURIST SERVICE PROVIDERS OF ARMENIA” NON-GOVERNMENTAL ORGANIZATION, հապավում՝ «TOURUNION»

1.6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Երևան, Չարենցի փ. 2-րդ նրբանցք 4 տ, հեռ. 099059950, էլ.փոստ՝ armtourunion@gmail.com

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության առարկան է ի շահ Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային գրավչության՝ զբոսավարների, ուղերցորդների, վարորդների և զբոսաշրջային ոլորտում գործող այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությունը և մասնագիտական որակավորման ապահովումը:

2.2. Կազմակերպության գործունեության նպատակները և խնդիրներն են

2.1.1. Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային բարձր որակի ծառայությունների ապահովումը:

2.1.2. Զբոսավարների, ուղեկցորդների, վարորդների և զբոսաշրջային ոլորտում գործող այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ազատ գործունեության և իրավունքների ապահովումը և պաշտպանությունը պետական և մասնավոր ապօրինի ներգործությունից

2.1.3. Զբոսավարների, ուղեկցորդների, վարորդների և զբոսաշրջային ոլորտում գործող այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հանրային կառույցների աշխատանքի մշտադիտարկումը և գնահատումը:

2.1.4. Զբոսաշրջության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի բացառումը և սպառողների իրավունքների պաշտպանությունը՝ զբոսաշրջային ոլորտի մասնագիտական որակի սահմանման գործընթացին աջակցության և մասնակցության միջոցով:

2.1.5. Զբոսավարների, ուղեկցորդների, վարորդների և զբոսաշրջային ոլորտում գործող այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնագիտական ազատ որակավորման ապահովումը, այդ գործընթացի թափանցիկության և վստահելիության ապահովումը:

2.1.6. Զբոսավարների, ուղեկցորդների, վարորդների և զբոսաշրջային ոլորտում գործող այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեության և իրավունքների հետ կապված գործընթացների մշտադիտարկումը, գնահատումը, և/կամ կանխարգելումն ու բողոքարկումը:

2.3. Իր նպատակներն իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով Կազմակերպությունը կարող է

2.3.1 իրականացնել զբոսաշրջային ոլորտում առկա խնդիրների դիտարկում և հանդես գալ նրանց գնահատականներով:

2.3.2 ամրագրել, ուսումնասիրել և հանրայնացնել Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային ոլորտում գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ապահովման և դրանց խախտման դեպքերը:

2.3.3. ներգրավել պատկան պետական և մասնավոր մարմիններին զբոսաշրջային ոլորտում գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ապահովման աշխատանքներում և գնահատել այդ ուղղությամբ նրանց կատարած աշխատանքը

2.3.4. առաջարկել ՀՀ կառավարությանը, պետական և մասնավոր մարմիններին զբոսավարների, ուղեկցորդների, վարորդների և զբոսաշրջային ոլորտում գործող այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց որակավորման չափորոշիչները և մասնակցել դրանց սահմանման հանրային քննարկումներին, որակավորման համապատասխան մարմնի աշխատանքներին, մասնագիտական համապատասխան եզրակացության հիման վրա բողոքարկել որակավորման մարմնի որոշումները:

2.3.5. սահմանել միջանկյալ կարգավիճակ կամ բողոքարկել զբոսաշրջության ծառայություններ մատուցող ֆիզիկական կամ իրավաբանական անձի տուգանումը, աշխատանքի կասեցումը կամ արգելքը մինչեւ դատարանի կամ մասնագիտական հատուկ հանձնաժողովի որոշումը:

2.3.6. կոռուպցիոն ռիսկերի բացառման և սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով համապատասխան փորձագետների մասնակցությամբ բողոքների առկայության դեպքում վերստուգել ֆիզիկական և իրավաբանական անձանց որակավորումը և տալ իր եզրակացությունը:

2.3.7. Հայաստանի Հանրապետության տարածքում զբոսաշրջային բարձր որակի ծառայությունների ապահովման նպատակով ոլորտի փորձառու և հայտնի մասնագետների ներգրավմամբ անցկացնել որակավորման կամ վերավորակավորման դասընթացներ՝ համապատասխան փաստաթղթերի տրամադրմամբ:

2.3.8. Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնել և զարգացնել տեղեկատվական կենտրոններ և փաստահավաք խմբեր

2.3.9. հաստատել գործընկերային հարաբերություններ իրավաբանական, հոգեբանական և մասնագիտական ինչպես պետական, այդպես էլ մասնավոր անձանց, կառույցների և կազմակերպությունների հետ

2.3.10. ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ

2.3.11. կազմակերպել և իրականացնել Հայաստանում հավատարմագրված արտասահմանյան կազմակերպությունների և դիվանագիտական առաքելությունների հետ համատեղ ծրագրեր և միջոցառումներ՝ զբոսաշրջային ոլորտում գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ապահովման և ազատ գործունեության պաշտպանության շրջանակներում:

2.3.12. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնել լրատվության միջոցներ, զանգվածային լրատվության միջոցներով տեղեկատվություն տարածել սեփական գործունեության և Հայաստանում զբոսաշրջության ոլորտի վերաբերյալ:

2.3.13. իրականացնել հումանիտար նպատակներով սոցիալապես անապահով խավերի աջակցող ծրագրեր, օժանդակել այդպիսի ծրագրերին:

2.3.14. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր աշխատանքներում ներգրավել կամավորների:

2.4. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական և ցանկացած իրավաբանական անձ, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները:

3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձը և/կամ իրավաբանական անձի ղեկավարը գրավոր (նաև էլեկտրոնային տարբերակով) դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

3.3 Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ իր կողմից հաստատված կարգով:

3.4. Կազմակերպությանն անդամագրված անձը (այդ թվում նաև իրավաբանական) ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալ Կազմակերպությունից: Անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի /նաև էլեկտրոնային տարբերակով/ հիման վրա:

3.5. Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում գործադիր մարմնի՝ Նախագահի որոշմամբ:

3.6. Կազմակերպության այն անդամը, ով պարբերաբար խախտում է սույն կանոնադրությամբ նախատեսված դրույթները, կարող է զրկվել անդամությունից: Վերստին անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

3.7 Կազմակերպության Համաժողովը կարող է սահմանել անդամավճար և այլ վճարներ՝ մասնակցության վճար, մուտքի միասնական վճար:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

4.1.1. Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման մարմիններում:

4.1.2. ներկա գտնվել համաժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նախագահի/տնօրենի կամ լիազորված անձի միջոցով

4.1.3. Կազմակերպության գործադիր մարմնի որոշմամբ սահմանված դեպքերում՝ անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից:

4.1.4. ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները:

4.1.5. Վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության մարմինների որոշումների բողոքարկումն անդամների կողմից իրականացվում է վերադասության կարգով: Անդամի կողմից բողոքարկումն իրականացվում է դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Համաժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով:

4.1.6 Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին:

4.1.7. Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա կառավարման մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ:

4.1.8. Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը:

4.1.9. իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

4.2.1. կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները:

4.2.2. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

4.2.3. նպաստել Կազմակերպության հեղինակության բարձրացմանը:

4.2.4. աջակցել կազմակերպության անդամների համալրմանը:

4.2.5. Համաժողովի կողմից սահմանված լինելու դեպքում մուծել անդամավճար:

4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ գործադիր մարմնի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամության ժամանակավոր կասեցում և Կազմակերպության անդամությունից զրկում:

4.4. Կազմակերպության անդամները պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների համար, իսկ Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ Համաժողովը և գործադիր մարմինը՝ Նախագահը

5.2. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Համաժողովին:

5.3. Կազմակերպության հերթական Համաժողովը հրավիրվում երեք տարին մեկ անգամ:

Կազմակերպության հերթական Համաժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

Նախագահը որոշում է Համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև Համաժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

5.4. Կազմակերպության արտահերթ Համաժողով հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

Կազմակերպության արտահերթ Համաժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Համաժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Համաժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Համաժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

5.5. Համաժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

5.5.1. Կազմակերպության կանոնադրության հաստատումը, փոփոխումը, լրացում կատարելը և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը:

5.5.2. այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը:

5.5.3. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը:

5.5.4. Կազմակերպության կառուցվածքի հաստատումը:

5.5.5. անդամավճարի չափի և վճարման կարգի սահմանումը:

5.5.6. Կազմակերպության Նախագահի ընտրությունը, փոփոխումը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

5.5.7. Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը:

5.5.8. Երեք տարին մեկ անգամ, Նախագահի կողմից Համաժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված՝ Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

5.5.9. Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

5.5.10. Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

5.5.11. Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

5.5.12. օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

5.6. Համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Համաժողովի արձանագրությունը ստորագրում են նախագահողը և քարտուղարը: Արձանագրությունները և կազմակերպության գործունեության հաշվետվությունները պահպանվում են հինգ տարի:

5.7. Համաժողովի որոշումը, որն ընդունվել է օրենքի կամ Կազմակերպության կանոնադրության խախտմամբ կամ ոտնահարել է Կազմակերպության անդամի իրավունքներն ու օրինական շահերը, կարող է դատական կարգով անվավեր ճանաչվել Կազմակերպության կամ անդամի դիմումի հիման վրա: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ սահմանում չի նախատեսել:

5.8. Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նա ընտրվում է Համաժողովի կողմից երեք տարի ժամանակով: Նախագահը ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և վարում Համաժողովի նիստերը:

5.9. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

5.10. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Համաժողովի որոշումներին համապատասխան՝

5.10.1. ապահովում է Համաժողովի որոշումների կատարումը.

5.10.2. տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից:

5.10.3. ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում:

5.10.4. տալիս է լիազորագրեր:

5.10.5. բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ:

5.10.6. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

5.10.7. հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը:

5.10.8. հաստատում է Համաժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 3 տարին մեկ ներկայացնում է Համաժողովի հաստատմանը:

5.10.9. հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները:

5.10.10. ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության անդամությունից:

5.10.11. իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

5.11. Իր լիազորություններն իրականացնելիս՝ Նախագահը Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

5.12. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Համաժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող են պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտներ: Այն օգտագործում է իր կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացման համար: . Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

6.2. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

6.2.1. սահմանված լինելու դեպքում անդամավճարներները, մասնակցության և մուտքի միասնական վճարները:

6.2.2. տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող նվիրաբերությունները:

6.2.4. դրամաշնորհները և նվիրատվությունները:

6.2.5. դրամական մուտքերը պետական բյուջեից:

6.2.6. բանկերից և/կամ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը:

6.2.7. իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացված միջոցները:

6.2.8. մուտքեր ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

6.3. Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձինք (բացառությամբ Կազմակերպության նախագահի) Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել Կազմակերպության նախագահի կողմից սահմանված կարգով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

7.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Համաժողովի կամ դատարանի որոշմամբ:

7.2. Համաժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

7.3 Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7.4. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Համաժողովի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է **08 ապրիլի 2025թ**.